

մի մեծարանաւք եւ շքեղութեամբ: 2 Չի թեպետ եւ գիտէին զվնասս նորա եւ զերդումս, եւ զուխտն զոր ուխտեալ էր նենգութեամբ ընդ սրբոյն Վարդանայ եւ ընդ ամենայն իշխանս¹ աշխարհին Յայոց, յաղագս զնոսա կորուսանելոյ եւ զինքն հաւատարիմ ցուցանելոյ՝ սակայն ոչ ինչ զգացուցեալ տային գիտել նմա. այլ լռութեամբ² որպէս զանգետս պատուէին զնա՝ որպէս զայր³ հաւատարիմ եւ զբարեգործ⁴, մինչեւ ածեալ հասուցանէին ի դուռն զսուրբ քահանայսն Աստուծոյ եւ զաւագս ի տանուտերացն Յայոց, ի սեպհացն՝ որ ապստամբն էին, ընդ նոսին եւ ի տոհմէն Մամիկոնեից եւ Կամսարականաց եւ յայլ ազգաց զտղայ մանկունսն ապստամբացն, զորս նախագոյն տարեալ նենգաւորին կացուցաներ առաջի հազարապետին Միհրնեստիի եւ այլ աւագանւոյ դրանս:

3 Եւ անաւրէն հազարապետն Արեաց հրամայէր նախ զքահանայսն ածել զառաջեալ. եւ հարցանէր զսուրբ երեցն Արածայ զՍամուէլ, եւ զնորին զհոգւոյ որդին, զսուրբ սարկաւագն զԱբրահամ, որոյ զկրակն անցուցեալ էր զԱրտաշատու. «Ո՞րպիսի համարձակութեամբ եւ ո՞ր իրամանաւ իշխեցէք գործել զայդպիսի մահապարտութեան գործ, եւ ոչ ածէք զմտաւ զահ թագաւորաց եւ զերկիւղ իշխանաց, եւ այնպիսի մեծ կրակի իշխեցէք ձգել զձեռս ձեր⁵. զի թէ մարդոյ եղեալ էր այնպիսի յանդգնութիւն՝ համայն արժանի մահու էր գործն, թող թէ յաստուածսն»: 4 Եւ լուեալ զայս սրբոցն երկոցունց, տեսնն Սամուէլի եւ Աբրահամայ՝ ետուն պատասխանի միաբանութեամբ, էր ինչ որ ստուգախաւսութեամբ, եւ էր որ եպերանաւք, ցուցանելով զհրեանց աներկիւղ համարձակութիւնն եւ լսողացն զանզգայաբար հարցմամբն ծիծաղելով: 5 Ասէն. «Երկնչել զերկիւղ զարժանն եւ զարդար ի թագաւորաց եւ իշխանաց՝ նոյն արեւնքն մեր հրամայէն. բայց զԱստուծոյ երկիւղն փոխանակել ընդ երկիւղի մարդոյ՝ ոչ առնումք յանձն: 6 Իսկ յաղագս կրակիդ որ ասէք ցմեզ, թէ սպանէք՝ մեք զկրակն ոչ զան հարկանելով եւ ոչ չարաչար խոշտանգանս ածելով նմա՝ վնասեցաք ինչ. այլ հայեցեալ ի ժամանակ ամբոխին եւ ի սպասաւորաց վատթարութիւնս, որք առ ոչինչ⁶ համարեալ զերկիւղ աստուածոցն⁷ իւրեանց, թողին զնա որպէս զոչինչ⁸ արհամարհանաւք, եւ ինքեանք զնացին. եւ մեր տեսեալ միայն զկրակն, առանց մարդոյ մոխրեալ, եւ այնպէս կացեալ ի բազում աւուրս առանց ուրուք

1 ՏՏ. եւ ամենայն իշխանաց

2 ՏՏ. լաւութեամբ. Ձ. այսպէս. ԲԳտ. ծանօթութեան մէջ ուղղորւմ են «զուցե լռութեամբ»

3 Բտ. որպէս զհայր

4 ՏՏ. եւ բարեգործ

5 Ձ. ձեռս ձեր

6 Ձ. որք առ ինչ

7 Ատ. այստեղ եւ յետոյ՝ աստուծոցն

8 ՏՏ. որպէս ոչինչ